ՄԱՌՆԵՈՒԼԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

# ՁԵՐ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԱՊԱԳԱՆ ՁԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է



ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

# ՁԵՐ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԱՊԱԳԱՆ ՁԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է

Մեր քաղաքը, մեր գյուղը, մեր ավանը... մենք այստեղ ենք ապրում: Մենք կարող ենք սպասել փոփոխությունների, սակայն, մենք ինքներս էլ կարող ենք բարելավել և ավելի գեղեցկացնել դրանք եթե մասնակցենք տեղական բյուջեի ծրագրավորմանը և դրանով օգնենք գործադիր իշխանությանը: Քաղաքացիական բյուջեն քաղաքացիների շահերի արտահայտման միջոցներից մեկն է մունիցիպալիտետի բյուջեի բաշխման մեջ: Այսեղից ելնելով՝ մենք կնպաստենք սակրեբուլոյին և գամգեբելին մեր քաղաքների և գյուղերի ապագայի համար լավագույն որոշումներ կայացնելու հարցում:Սրա արդյունքում կբավարարվեն մեր շահերը և մեր հարկային մուծումները կհասնեն իրենց նշանակման կետին: Քաղաքացիական բյուջեն հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ, թե ինչպես է աշխատում մունիցիպալիտետը: Քաղաքացինըրի ընդգրկումը գումարների բաշխման գործընթացում մունիցիպալիտետի բյուջեի կառավարման է՛լ ավելի արդյունավետ հնարավորություն է տալիս, իսկ խորհրդատվությունները հասարակության հետ տեղական բնակչության կարիքների ուսումնասիրման ավելի արդյունավետ միջոց է, քան հետազոտման անցկացումը:

Այս ծալագրքույկը / բուկլետըձեզ կպատմի, թե ինչպես է «աշխատում» բյուջեն, ինչպիսին կլինի Մառնեուլիի քաղաքացիական բյուջեն և ինչպիսի ազդեցություն կարող է թողնել նա: Ինչ կարող եք անել, որ դառնաք կառավարության խորհրդատուն և ակտիվ քաղաքացիները, ինչպես եք կարող ներկայացնել ձեր առաջարկությունները:

- Համառոտ՝ Մառնեուլիի մասին
- Ինքնակառավարումն ու նրա գործառույթները
- Մունիցիպալիտետի բյուջեն
- Քաղաքացիական բյուջեն
- Մառնեուլիի քաղաքացիական բյուջեն

# ՀԱՄԱՌՈՏ՝ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄԱՍԻՆ



**Մունիցիպալիտետն ընդգրկում է `** քաղաք Մառնեուլին և 17 տարածքային միավոր՝ Ծերեթելին, Շահումյանը, Շուլավերը, Ղիզիլաջլոն, Կուլարը, Աղքերփին, Դամիա-Գեուրարխը,Ծերաքվին, Ալգեթին, Կազագանը, Կութլիարիսը, Թամարիսը, Խոժոռնին,Քափանախչին, Սադախլոն, Կասումլոն և Օթերթին:






ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է

**136 000 ՄԱՐԴ**




ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ազգությամ
ադրբեջանցիներ՝ 86,4%,

վրացի՝ 7,8%,

հայ՝ 5,2%

և այլ ազգային փոքրամասնության խմբեր:

Կրոնի առումով մեծամասնությունը մուսուլմաններ են, հետո՝ ուղղափառ քրիստոնյաներ, մնացած բնակչությունը , հիմնականում, հայկական-գրիգորյանական կրոնի հետևորդներ են:

# ԻՆՉ Է ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ,

## դրա գործառույթները և պարտականությունները

Ինքնակառավարման միավորն անկախ իրավաբանական անձ է, որն ունի գործադիր և ներկայացուցչական մարմիններ՝ Գամգեոբա և Սակրեբուլո, այն ունի օրենքով նախատեսված լիազորություններ, սեփական բյուջե և գույք: Միայն ինքնակառավարման միավորներն ունեն բյուջե ընդունելու և դրա մեջ փոփոխություններ կատարելու իրավասություն, ընդունելու բյուջեի կատարման մասին հաշվետվությունները և գնահատելու դրա կատարումը: Մառնեուլիի մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինն է Սակրեբուլոն, Մառնեուլիի մունիցիպալիտետի գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնական անձն է գամգեբելին: Գամգեբելին ընտրվում է ուղիղ ընտրության ճանապարհով, գաղտնի քվեարկությամբ, ասինքն՝ մունիցիպալիտետի տարածքում գրանցված Վրաստանի քաղաքացիների կողմից, չորս տարի ժամկետով:



ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

- հասարակական կարգ ու կանոն և պաշտպանություն.
- շինարարություն, վերականգնում, ենթակառուցվածքների շահագործում
- կրթություն
- մշակույթ, կրոն, սպորտ
- առողջապահություն և սոցիալական ծրագրեր





### ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ ԻՐԱՎԱՍՈՒ Է ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ՝

1) Ավտոմեքենաների կայանման տեղերի որոշում և կայանման կարգի սահմանում, բնակավայրեր-ավաններում փողոցների մաքրումը, փողոցային լուսավորումը, դրենաժային համակարգի, կոյուղու, աղբավայրերի կազմակերպում, կենցաղային մնացորդների հավաքման և ուտիլիզացիայի աշխատանքների կազմակերպման պլանավորում և իրականացում կամ դրանց իրականացման մասին մունիցիպալիտետային գնումների կազմակերպում, գերեզմանների խնամք:

2) Ինքնակառավարվող միավորի տարածքի բարեկարգում և կանաչապատում, համապատասխան ծրագրերի հաստատում:Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում կամ դրանց իրականացման համար մունիցիպալային գնումների կազմակերպում;

3) Տեղական նշանակություն ունեցող ճանապարհների պահպանում, շինարարություն և զարգացման ապահովում;

4) Մունիցիպալիտետի հաշվեկշռի /բալանսի վրա գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի խնամք-պահպանում տեղական նշանակության գրադարանների, թանգարանների,թատրոնների, ցուցահանդեսների, սպորտային-առողջապահական օբյեկտների գործունեությանъ, կուլտուրական միջոցառումների կազմակերպում

5) մունիցիպալային արխիվի ստեղծում և արխիվային սպասարկման սակագների որոշում Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով;

6) նախադպրոցական և արտադրպոցական կրթա-դաստիարակչական հաստատությունների ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրական) իրավաբանական անձի ձևով ստեղծում և դրանց գործունեության ապահովում:



### ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԻ ՄՏՆՈՒՄ՝

1) դպրոցական և բարձրագույն ուսումնահան հաստատությունների գործունեության կազմակերպումը;

2) պետական նշանակության օբյեկտների գործունեության մեջ մասնակցություն ցուցաբերում, այդ թվում՝ պետական նշանակություն ունեցող ճանապարհների, կառույցների վերականգնում, պետական նշանակությունունեցող անտառի և ջրի ռեսուրսների կառավարում;







# ԻՆՉՆ Է ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ,

## դրա ձևավորման և կատարման սկզբունքները

Ինքնակառավարմանմիավորի բյուջեն եկամուտների և պարտադիր ծախսերի մի համադրություն է, որն անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման գործառույթների եւ պարտականությունների կատարման համար, որն էլ հաստատում է ներկայացուցչական մարմինը՝ Սակրեբուլոն:

### ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Բյուջեի նախագծի նախապատրաստման, բյուջեի կատարման և հաշվետվության համար պատասխանատու է համապատասխան տեղական ինհնակառավարման **գործադիր մարմինը՝Մառնեուլիի մունիցիպալիտետի Գամգեոբան:**

Մինչև բյուջեի նախագիծը Սակրեբուլուներկայացնելը, Գամգեոբայի նախաձեռնությամբ, ոչ կառավարական կազմակերպությունների եւ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ Մառնեուլիի «Դեմոկրատական ներգրավման կենտրոն»-ի գրասենյակում կատարվում է բյուջեի նախագծի նախնական քննարկում:

Ոչ ուշ, քան **15 նոյեմբերի,** գամգեբելին/մարզպետը ներկայացնում է բյուջեի նախագիծը ներկայացուցչական մարմփի (Սակրեբուլոյի) նախագահին, որն էլ այն քննարկման է ներկայացնում ներկայացուցչական մարմփին:



## ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1) Բյուջեինախագիծըտեղական ինքնակառավարման ներկայացուցչականմարմին ներկայացնելուց 5 օրվաընթացքում պետքէիրապարակելհանրայինքննարկման համար, հնարավորէտեղականթերթերում, քաղաքապետարանիկայքում www.marneuli.ge, մունիցիպալային շենքի տեղեկատվական վահանակում:

2) Տեղականինքնակառավարմաններկայացուցչականմարմինըիրապ արակայնորենքննարկում է բյուջեի նախագիծը և նոր բյուջետային տարվա մեկնարկիցառաջ որոշում է կայացնումտեղականինքնակառ ավարմանմարմնի բյուջեի նախագծի հաստատման մասին: Որոշումը՝ բյուջեի նախագծի հաստատման մասին, ընդունվումէներկայացուցչակ անմարմնի անդամներիձայներիմեծամասնությամբ:

3) Դիտողությունների առկայության դեպքում տեղականինքնակա ռավարմաններկայացուցչականմարմնի նախագահը ոչ ուշ, քան նոյեմբերի 25-ը, բյուջեի նախագիծը՝ նշումներով, վերադարձնում է գամգեբելիին:

4) Բյուջեի նախագծի նույն կամ ուղղված տարբերակը ոչ ուշ քան դեկտեմբերի 10-ը տեղականինք նակառավար մանմարմնի գամգեբելին (քաղաքապետը) ներկայացնում է ներկայացուցչական մարմնի նախագահին:

**Ինքնակառավարման** միավորի բյուջեի մուտքերը կազմվում են սեփական կամ ոչ սեփական/արտաքին եկամուտներից: Սեփական եկամուտներին են պատկանում տեղական հարկերն ու վճարները, հավասարեցված փոխանցումներով Վրաստանի օրենսդրությամբ **ինքնակառավարման** միավորներին հատկացված այլ եկամուտները, իսկ ոչ սեփական/արտաքին եկամուտներին են պատկանում հատուկ և նպատակային փոխանցումներն ու Վրաստանի օրենսդրությամբ սահմանված այլ եկամուտները/մուտքերը:

**Ինքնակառավարման** միավորը **սեփական եկամուտներ ծախսելը** կարող է իրականացնել **անկախ և սեփական հայեցողությամբ:**

Ոչ սեփական/արտաքին եկամուտների ծախսը կատարվում է Վրաստանի կառավարության կողմից սահմանված նպատակներով:

## ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՂԿԱՑԱԾ Է՝

| Անվանում | 2015 թվականի պլանը | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում | |
| | | Սեփական եկամուտները | Տարեկան պետական բյուջեի հիմնադրամից հատկացված միջոցների փոխանցումները |
| **Մուտքեր** | **27 705 300** | **21 360 800** | **6 344 600** |
| Եկամուտներ | 21 321 300 | 15 541 200 | 5 780 100 |
| Ոչ ֆինանսական ակտիվների նվազումը | 140 000 | 140 000 | 0 |
| Ֆինանսական ակտիվների նվազումը (մնացորդի բացառությամբ) | 6 244 000 | 5 679 600 | 564 400 |
| Պարտավորությունների աճը | 0 | 0 | 0 |
| **Վճարումները** | **27 705 300** | **21 360 800** | **6 344 600** |
| Ծախսեր | 11 739 300 | 11 418 600 | 320 800 |
| Ոչ ֆինանսական ակտիվների աճը | 15 332 700 | 9 434 200 | 5 898 500 |
| Ֆինանսական ակտիվների աճը(մնացորդի բացառությամբ) | 0 | 0 | 0 |
| Պարտավորությունների նվազումը | 633 400 | 508 000 | 125 300 |
| **Մնացորդի փոփոխությունը** | **0** | **0** | **0** |

## ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

| Անվանում | 2015 թվականի ծրագիր | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում | |
| | | Սեփական եկամուտները | Պետական բյուջեի հիմնադրամից հատկացված միջոցների փոխանցումները |
| **Եկամուտներ** | **21 321 300** | **15 541 200** | **5 780 100** |
| **Հարկեր** | **3 916 900** | **3 916 900** | **0** |
| Գույքի հարկ | 3 916 900 | 3 916 900 | 0 |
| **Դրամաշնորհներ/գրանտեր** | **14 944 600** | **9 164 500** | **5 780 100** |
| Հավասարեցված փոխանցումներ | 8 914 500 | 8 914 500 | 0 |
| Թիրախային փոխանցում պատվիրակված լիազորությունների իրականացման համար | 250 000 | 250 000 | 0 |
| **Հիմնադրամից առանձնացված փոխանցումներ** | **5 780 100** | **0** | **5 780 100** |
| Այլ եկամուտներ | **2 459 800** | **2 459 800** | **0** |



## ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲՅՈՒՋԵԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

| დასახელება | 2015 թվականի ծրագիր | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | Այդ թվում | |
| | | Սեփական եկամուտները | Պետական բյուջեի հիմնադրամից հատկացված միջոցների փոխանցումները |
| Մառնեուլիի մունիցիպալիտետը | 27 705 300 | 21 360 800 | 6 344 600 |
| Ներկայացուցչական և գործադիր մարմինների ֆինանսավորում | 4 593 400 | 4 593 400 | 0 |
| Պաշտպանություն, հասարակական կարգ ու կանոն և անվտանգություն | 349 000 | 349 000 | 0 |
| Ենթակառուցվածքների շինարարություն, վերականգնում և շահագործում | 15 558 000 | 9 288 500 | 6 269 600 |
| Կրթություն | 2 650 500 | 2 650 500 | 0 |
| Մշակույթ, կրոն, երիտասարդների աջակցում և սպորտ | 3 707 700 | 3 632 700 | 75 000 |
| Սոցիալական և առողջապահական ծրագրեր | 846 600 | 846 600 | 0 |

Տեղական բյուջեից ծախսը տնօրինելիս **վերը նշված աշխատանքների իրականացման ժամանակ նախապատվությունը տրվում է առաջնահերթ ոլորտներին և դրանց հաջորդականության պահպանմանը: Առաջնահերթային ուղղություններիփաստաթուղթը կազմում է գամգեոբան և հաստատելու համար նրան հաստատելու է ներկայացնում սակրեբուլոյի բյուջեի նախագծի հետ միասին:**

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ,

## նրա նշանակությունը և գործառույթը

Մառնեուլիի մունիցիպալիտետի ղեկավարությունը նպատակ ունի քաղաքացիական բյուջեի հարցերում բնակչությանն ավելի շատ ընդգրկել ։ Սրա հնարավորություն է տալիս քաղաքացիական բյուջեն: Քաղաքացիական բյուջեն՝ գործընթաց է, որն ապահովում է հասարակության ընդգրկումը մունիցիպալիտետի բյուջեի ձևավորման մեջ և դրա իրականացումը: Սրանով հասարակությանը մասնակցության հնարավորություն է տրվում մունիցիպալիտետի քաղաքների և գյուղերի համար լավագույն որոշումներ կայացնելու և բնակչության շահերի բավարարման գործում:

Գոյություն ունեն մի քանի տարբերակներ այս գործընթացում:

**Դրանցից մեկն է՝** այն նախագծերի իրականացումը, որոնք ներկայացված են առանձին քաղացիների կամ տեղեկատվական խմբերի կողմից քաղաքացիական բյուջեի շրջանակներում: Իշխանությունն առանձնացնում է գումար ընդհանուր բյուջեից և հասարակությունը քննարկում է ներկայացրած նախագծերը և որոշում է կայացնում, թե որն է ավելի առաջնահերթային, անհրաժեշտ և հետաքրքիր: Ընտրած նախագծերի իրականացումը կատարում է մունիցիպալիտետը:

**Երկրորդ տարբերակը՝** որի միջոցով հնարավոր է հասարակության ներգրավումը քաղաքացիական բյուջեում՝ քաղաքի և մարզի առաջնահերթությունների և հեռանկարների շուրջ բաց բանավեճերի/դիսկուսիաների անցկացումն է: Այս դեպքում մենք ուշադրությունը չենք սևեռում առանձին նախագծերի վրա և առաջարկում ենք հարցեր՝ ի՞նչն է անհրաժեշտ ֆինանսավորել առաջին հերթին՝ կրթությունը, սոցիալական ծրագրերը և այլն: Սա բանավեճ է երկարաժամկետ նախագծերի շուրջ: Այս դեպքում հասարակությունը պետք է որոշի՝ ինչն է ավելի անհրաժեշտ՝ նոր ճանապարհը, մանկապարտեզը, դպրոցը, ջրամատակարարումը... սրանք բոլորն էլ անհրաժեշտ են, բայց որոշ բաներ կարելի է հետաձգել:
























# ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

2015թվականինՄառնեուլիի մունիցիպալիտետն իրականացնում է 2016 թվականի քաղաքացիական բյուջեի «պիլոտային ծրագիրը»:

Առաջին տարի ՝ պիլոտային փուլ: Սա քաղաքացիական բյուջեի հնարավորությունների գնահատումն ու օպտիմալ որոշում ընդունելն է: Տեղական առանձնահատկություններից ելնելով՝ ապագայում հնարավոր է որոշակի փոփոխություններ լինեն:

| **Յուրաքանչյուր տարի**<br>Հաջորդ տարվա քաղաքացիական բյուջեի մշակումը | **2015**<br>2016 թվականի քաղաքացիական բյուջեի մշակումը |
|---|---|
| 1) Քաղաքացիական բյուջեի կանոնների մշակումը | Վարժանքներ՝ ապրիլ- հուլիս |
| 2) Բանավեճեր առաջնահերթությունների մասին | Մունիցիպալիտետի բոլոր գյուղերի ներկայացուցիչների համար «որկշոպեր» 29–31 հուլիսին |
| 3) Նախագծերի ներկայացում | 1 օգոստոսից մինչև օգոստոսի 20-ը<br>**18 գյուղի սակրեբուլոյի**<br>ներկայացուցիչների համար |
| 4) Նախագծերի քննարկում և խորհրդատվություններ | Մշտապես նախագծի հանձնումը մինչև օգոստոսի 26-ը ներառյալ՝ այդ թվում նախագծերը կազմված մարաթոնի ժամանակ 6,7 և 13,14 օգոստոսին Մառնեուլիում, Ստորին Սարալում և Սադախլոյում: Յուրաքանչյուր ստուգված նախագիծ հասանելի կլինի www.marneuli.ge կայքէջում և մշակույթի կենտրոններում և մշակույթի տներում: |
| 5) Քաղաքացիների կողմից նախագծի ընտրություն | Առաջնահերթային նախագծերի ընտրություն Մառնեուլիի քաղաքացիական խորհրդում Ծերաքվեում 27-29 օգոստոսին (փոխադրամիջոցն ապահովում է մունիցիպալիտետը)<br>Սեպտեմբեր - ճշգրիտ test նախագծեր քաղաքապետարանի.<br>Հոկտեմբերի - ի հրապարակումը նախագծերի շրջանակներում իրականացվում է քաղաքացիական բյուջեի |
| 6) Նախագծի իրականացում՝ 2016 ճ. հունվար-դեկտեմբեր | իրականացում՝ 2016 ճ. հունվար-դեկտեմբեր |

* Լրացուցիչ տեղեկությունների համար տես վրա p.22



Մառնեուլիի մունիցիպալիտետն իր բյուջեից առանձնացնում է 1 500 000 լարի քաղաքացիական բյուջեի համար (ռեալիզացիա2016 թվականին) միկրոնախագծերի իրականացման համար նախատեսված է 500 000 լարի (մեկ նախագծի առավելագույն արժեքը կազմում է 10 000 լարի)

1 500 000 լարի է կազմում Մառնեուլիի ընդհանուր բյուջեի 5%. Համեմատման համար ՝ Լեհաստանում շատ դեպքերում հատկացվում է 1-2% !

## Ով և ինչպես կարող է մասնակցություն ցուցաբերել քաղաքացիների բյուջեում

*Նախագծում մասնակցել կարող է մունիցիպալիտետի ցանկացած քաղաքացի առանց որևէ սահմանափակումների, անկախ նրա հասակի, սեռի և էթնիկական ծագումի՝ 16 տարեկան հասակից:*

### ՍԱ ՇԱՏ ՊԱՐԶ Է: ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ՝

1) մասնակցել տարածաշրջանի անհրաժեշտությունների և նախագծերի ընտրության սկզբունքների մշակման գործին,.

2) մտցնել ձեր նախագիծը

ա) հայտի ձևը հասանելի է www.marneuli.ge – ում և ձեր գյուղի հավատարմատարի մոտ վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով:

բ) Լրացրեք ձևը, նկարագրեք նախագիծը, գնահատեք նախագծի ընդհանուր արժեքը ( թվարկեք դրա բաղադրիչները) և եթե կարիք ունեք խորհրդտվության, ձեզ կօգնի մունիցիպալիտետի մասնագետը:

գ) Նախագիծը հանձնեք ձեր հավատարմատարին կամ մունիցիպալիտետ՝ մինչև ասված ժամկետը (2015 թվականի օգոստոսի 20-ը)

3) մասնակցել նախագծերի ընտրությանը
Մասնակցություն տարածաշրջանի անհրաժեշտությունների և նախագծերի ընտրության սկզբունքների մշակման ուսումնասիրության գործին

2015 թվականի օգոստոսի 29-31-ին մունիցիպալիտետի բոլոր գյուղերի ներկայացուցիչների համար կանցկացվի 3 վարժանք:

## Ինչպես կազմել լավ նախագիծ:

1) Հավաքեք ձեր գյուղի ընդհանուր խնդիրներ ունեցող բնակիչներին:




2) Առաջին հերթին պետք է գրի առնեք գոյություն ունեցող խնդիրների ցուցակը մեծ ձևաչափի ունեցող թղթի վրա և քննարկեք այն բանի հարցը, թե դրանցից որն է առավել առաջնահերթային:

3) Այնուհետև նկարագրեք հնարավոր որոշումները, ընտրեք լավագույնը, որի իրականացումը իրատեսորեն հնարավոր է հաջորդ տարվա ընթացքում:

4) Ստեղծեք խումբ, որին էլ կհանձնարարվի հայտերի լրացումը և նախագծի մշակումը ( մեկը լրացնում է հայտը, մյուսը պարզում է արժեքը և այլն):

# Մոտավոր գների համառոտ ցուցակը

### ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- արտաքին լուսավորում 1 լապտերայուն՝ 830 լարի
- ասֆալտի ծածկույթ 1 քառ.մմ- 50 լարի 1 քառ.մմ- 10 լարի
- խմելու ջրի անցկացում 500 տուն – 400 000 - 450 000 լարի
- փոքր մարզահրապարակ 90 000 -100 000 լարի
- կոյուղի 200 ընտանիք – 220 000 լարի
- միջին հասարակական շենքերի ( օրինակ՝ թանգարան, գրադարան)
- հիմնական վերանորոգում 200 քառ.մ. – 50 000-100 000 լարի
- նույն կարգի շենքերի կոսմետիկ վերանորոգում – 100 քառ.մ. 800 – 1000 լարի





## ԱՅԼ ՍԱԿԱԳՆԵՐ ( ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ և ԱՅԼՆ)

- մանկապարտեզի դաստիարակի աշխատավարձը – 360 լարի
- մանկապարտեզի տնօրենի աշխատավարձը – 500 լարի



**մշակութային միջոցառումների համար՝**

- պրոյեկտորի ձեռքբերում – 1 200 լարի
- 2 փոտոապարատ – 1 000 լարի
- համակարգիչ/նոութբուք – 800 -1 000 լարի
- համակարգչի / նոութբուքի դինամիկներ – 80 լարի
- ձայնային համակարգ (2 դինամիկ, միկշեր, բարձրախոսներ) – 2 600 – 3 400 լարի
- մշակույթի մասնագետի/անիմատորի աշխատավարձը (երեխաների/երիտասարդներինշաբաթական 2-3 լրացուցիչ դասեր պարապելու համար) – 100 լարի
- մունիցիպալային հաստատությունների համար համացանց (օրինակ՝ մշակույթի տուն) – 300 լարի անցկացման և 30 լարի ամսական վճարում:

**Սպորտ՝**

- մատ/ըմբշամարտի գորգ– 14 000 լարի
- Շախմատի 5 կոմպլեկտ– 300 լարի
- գնդակներ– 250 լարի.



## Հիշե՛ք



- Յուրաքանչյուր քաղաքացի կամ նախաձեռնող խումբ կարող է ներկայացնել մեկ հայտից ավելի:
- Կարող եք ներկայացնել փոքր նախագիծ՝ առավելագույնը 10 000 լարի արժողությամբ ( այս նախագծի համար հատկացված է – 500 000 լարի) մեծ նախագիծ(այս նախագծի համար հատկացված է – 1 000 000 լարի)
- Այն նախագծերի համար, որոնց արժեքը գերազանցում է 10 000 լարին, առաջարկում ենք ձևավորել մի քանի գյուղերի կամ գյուղի սակրեբուլոյի ոչ ֆորմալ միություն
- Հեշե՛քն նկատի՛ ունեցեք մունիցիպալիտետի առաջնահերթությունները և իրավասությունները:
- Լավ գիտակցեք գործողությունների հաջորդականությունը: Եթե անհրաժեշտ է ճանապարհ, ոռոգման ջուր և կոյուղի՝ առաջին հերթին պետք է կատարվի ստորգետնյա կոմունիկացիաներ և հետո ճանապարհը:
- Այն դեպքում, երբ բյուջեի ծախսը գերազանցում է 5 000 լարին՝ մունիցիպալիտետը պարտավոր անցկացնել տենդեր՝ գնումների կամ սպասարկման շուրջ:
- Յուրաքանչյուր հաստատված նախագիծ պետք է ավարտվի 2016 թվականին: Ամենահաջող նախագծերը կշարունակվեն նաև ապագայում :
- Մեկանգամյա գործողությունից բացի (օրինակ՝ շենքի վերանորոգում) պետք է հաշվի առնել ամենամյա ծախսերը ( օրինակ շինարարություն/վերականգնում՝ հունվար-օգոստոս, գործում՝ սեպտեմբեր-դեկտեմբեր):
- Այն ֆինանսավորումից բացի, որ հատկացնում է մունիցիպալիտետը, շատ կարևոր է ձեր լուման՝ ձեր ակտիվութունը, այն , ինչը կարող եք կատարելդուք:

Բացվել է 2015 թվականին, իսկ բնակիչները Մառնեուլի Քաղաքացիական խորհրդի կընտրի առավել կարեւորները. Հոկտեմբերի սկզբին, երբ ստուգում, խորհուրդը կկայացնի ցուցակը ծրագրերի իրականացման. Այս ցուցակը կքննարկվի բնակիչների

## Նախագծի վերստուգումը



Ձեր նախագիծը ստուգվում է մունիցիպալիտետի մասնագետների կողմից: Նրանք պետք է սահմանեն նախագծի արժեքը, դրա իրականացման տեխնիկական և իրավաբանական հնարավորությունները, մունիցիպալտետի իրավասությունների, նրա խնդիրների և առաջնահերթությունների մեջ մտնում է, թե՝ ոչ: Այդպեսև պետք է սահմանվի նախագծի իրականացման ժամանակը՝ կարճաժամկետ, թե երկարաժամկետ է այն: Նախագծի արժեքը չի կարող գերազանցել քաղաքացիական բյուջեի համար հատկացված գումարը: Այս դեպքում այսպիսի նախագիծը կանցնի մունիցիպալիտետի առաջնահերթությունների շարքին և կիրականանա փուլ առ փուլ: Հիշե՛ք, եթե ձեր նախագիծը չհայտնվի քաղաքացիական բյուջեում, դրա իրականացումը հնարավոր է նաև այլ ճանապարհով ( կարդա՛ ծալագրքույկը/բուկլետը մինչև վերջ)

Նախագծերի ստուգումը չի կարող հիմնվել անհատական գնահատումների վրա: Ինչն է իրոք կարևոր, պետք է որոշի ժողովուրդը:

## Մառնեուլիի կյանքում ներգրավվելու այլ հնարավորությունները

**Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ**՝ մունիցիպալիտետ հայտ ներկայացնել հնարավոր է ողջ տարվա ընթացքում (միայն ենթակառույցային նախագծերի համար 2015 թվականին կենտրոնական բյուջեից առանձնացվել է 2 000 000 լարի):

**Տեղական նախաձեռնություններ՝ շրջանի բնակչության և մունիցիպալիտետի կողմից նախագծերի միասնական իրականացում:** Մունիցիպալիտետն ապահովում է բնակչությանը նյութերով՝ բնակչությունը կատարում է աշխատանքը:

**Բյուջեի նախագծի քննարկումը** ՝USAID-ի շենքում ամեն տարի անց է կացվում նախագծերի հանրային քննարկում:

**Մասնակցություն սակրեբուլոյի նիստերին**՝ կարող է յուրաքանչյուր ցանկացող:

**Ընտրություններ**՝ չորս տարին մեկ անգամ կարող եք մասնակցել:

**Տեղական ոչ կառավարական կազմակերպություններ**՝ դուք կարող եք միանալ Մառնեուլում գործող կազմակերպությանը և մասնակցել դրանց նախագծերում:



## Մունիցիպալիտետի ընդունելության օրերը՝

**Գամգեբելի ՝**
**ՄԵՐԱԲ ԹՈՓՉԻԱՇՎԻԼԻ**
Երկուշաբթի – 9:00 –18.00
Երեքշաբթի - ուրբաթ – 10:00 -18:00
հեռ.՝ 0357 22 43 54

ԳԱՄԳԵԲԵԼԻԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԸ՝
ԱՄԵՆ ՕՐ 10.00 – 18.00

**Տեղակալները՝**

**ԶԱՈՒՐ ՏԱԲԱՏԱՁԵ** / հեռ.՝ 0357 22 24 24
**ԹԵՄՈՒՐ ԲԵՐԻՁԵ** / հեռ.՝ 0357 22 2727
**ՔԱՄԱՆԴԱՐ ԻՍՄԱԻԼՈՎ** / հեռ.՝ 0357 22 28 28

**Ծառայության պետերը՝**

**ՎՈՒԳԱՐ ՄԱՄԵԴՈՎ** / հեռ.՝ 0357 22 12 30
**ՆԻՆՈ ԴԵԿՆՈՒԻՁԵ** / հեռ.՝ 0357 22 19 98
**ԼԵՐԻ ՓԱՆԳԱՆԻ** / հեռ.՝ 0357 22 22 48
**ՏԱՐԻԵԼ ՄՈՍԱՆԻ** / հեռ.՝ 0357 22 23 23
**ՌԱԱՁ ԱՐԵՇԻՁԵ** / հեռ.՝ 0357 22 46 38
**ՄԱՄՈՒԿԱ ՆԱՎԵՐԻԱՆԻ** / հեռ.՝ 0357 22 44 11

www.marneuli.ge
www.facebook.com/marneuli.gov.ge

Fundacja Inna Przestrzeń
Fundacja Solidarności Międzynarodowej
ONE CAUCASUS
Polish aid

Նախագիծը ֆինանսավորվում է « Դեմոկրատիայի աջակցություն» ծրագրի միջոցների հաշվից, որը իրականանում է Լեհաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության«Լեհաստանի զարգացող համագործակցություն» ծրագրի շրջանակներում:

Հրատարակությունըն արտահայտում է հեղինակի անձնական կարծիքը և չի կարող նույնականացված լինել Լեհաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական դիրքորոշման հետ:

